



ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԸ

Լրացավ վրահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Սուրեն Ավչյանի ծննդյան 70-ամյակը:

Սուրեն Ավչյանը Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի հին անդամներից է: Նա մեծ ավանդ ունի հայ և վրաց ժողովուրդների գրական կապերի ամրապնդման և Թբիլիսիի Սա. Ծափումյանի անվան թատրոնի կենսունակության գործում:

Հոբելյարը հանդիսանում է Վրաստանի հայ ականավոր գրող-քանաստեղծ-թատերագիր-թարգմանիչներից մեկը:

Ս. Ավչյանը ծնվել է 1904 թ. Թբիլիսիում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցներից մեկում՝ Հակոբ Աղաբաբի, Աթաբեկ Խնկոյանի և ուրիշների շնչի տակ:

Ղեռ դպրոցական տարիներից հա սկսել է գրել քանաստեղծություններ, որոնցից մի քանիսը առաջին անգամ տպագրվել են 1923 թ. «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրում: Առանձնապես հաջող են նրա լիբիկական գործերը, որոնցից մի քանիսը երգերի են վերածվել և լայն տարածում գտել ժողովրդի մեջ:

1924 թ. սկսած Ավչյանն իր մասնակցությունն է բերել վրացահայ թատրոնի ստեղծման և կազմակերպման գործին: Հանդիսականների ջերմ սիրուն են արժանացել նրա «Սոս և Վարդիթեր», «Քյոր օլլի», «Մալաթ Նովա», «Պլըր Պուլի» և մյուս պիեսները: Թատերական արվեստի զարգացմանը մատուցած ակնառու ծառայությունների համար Վրաստանի կառավարությունը նրան շնորհել է հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Ավչյանի գրական-հասարակական գործունեության ամենաբեղմնավոր հատվածը

հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, գրական կապերի ամրապնդման գործում նրա կատարած քրտնաջան աշխատանքն է: Կես դարից ավելի նա ծառայում է այդ նպատակին՝ հայերենից վրացերեն և



վրացերենից հայերեն թարգմանելով դասական ու ժամանակակից հեղինակների բազմաթիվ գործեր: Նրա գրչին են պատկանում, օրինակ, Ա. Ծանշիաշվիլու «Արսեն» և «Խնիսերի Գոչա» (ըստ Ալ. Ղազ-

բեգիի), Ս. Կրկիաշվիլու «Հերոսների սերունդ», Գ. Բասազովի «Իցկա Ռիթմաշվիլի», Գ. Նախուցորիշվիլու և Բ. Կանդելակիի «Նա-գարբեքիա», Կ. Բուաշիձեի «Նուրբ ապրումներ», Մ. Մրկիշվիլու, Ա. Ակիշիվաձեի, Մ. Բարաթաշվիլու, Գ. Ջափարիձեի, Զ. Անտոնովի, Մ. Կիկվիձեի, Ա. Ցագարելու պիեսների, Վ. Դոկիձեի «Քեթո և Կոտե», Օ. Թաթաթիշվիլու «Միևդիա» օպերաների լիբրետոների (Հովհ. Ագուլանի համահեղինակությամբ), Կ. Գամախուրդիայի «Առաջնորդը» և «Վարպետաց վարպետի աջը», Ի. Լիսաշվիլու «Կեցխովելի» վեպերի թարգմանությունը հայերեն, ինչպես նաև Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի, Ալ. Ժիրվանզադեի «Քառս» վեպի, Լ. Միքայելյանի «Գոռ» պիեսի և բազմաթիվ այլ հեղինակների արձակ, չափածո ու դրամատիկական երկերի թարգմանությունները վրացերեն:

Նրա գրչին են պատկանում «Հայ-վրացական թատերական փոխհարաբերություններ» (վրացերեն և հայերեն առանձին-առանձին), «Վրաց գրականությունը հայերեն», «Թբիլիսին և հայ գրականությունն ու մամուլը», «Իլիա Շավճավաձեն և հայ հա-

սարակությունը», «Հայկական թատրոնը Թբիլիսիում», «Ավետիք Իսահակյան», «Խաչատուր Աբովյան», «Նիկո Բարաթաշվիլին և հայ գրականությունը» և բազմաթիվ այլ հոդվածներ, ուսումնասիրություններ:

Հոբելյարը երկար տարիներ, որպես վաստակավոր առեմնապետ, վրահայոց թեմական խորհրդին և միաժամանակ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հայրենասիրական և խաղաղասիրական 20-ամյա գործունեությանը բերել է իր արտագին մասնակցությունը՝ արժանանալով Նորին Սրբության օրհնությանը և գնահատանքին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, ջերմորեն շնորհավորում է վրահայոց թեմի թեմական խորհրդի առեմնապետ, վաստակաշատ և հայրենասեր գրող-թատերագիր-թարգմանիչ, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության և մշակութային կապերի սերտացման անխուց մշակ Սուրեն Ավչյանին՝ իր ծննդյան 70-ամյա հոբելյանի առթիվ, և մաղթում նրան ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի փառս հայ մշակույթի:

